ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«06» հունիսի 2019 թվականի N:246-ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ N5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի N 47-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին ենթակետի, 4-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 4-րդ ենթակետի, 11-րդ, 11.1-ին, 13-րդ, 15-րդ, 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2019 թվականի մայիսի 22-

ի նիստի թիվ 11 արձանագրությունը, Քրիստինե Սարոյանի 2019 թվականի մայիսի 21-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամ՝ ծնողական խորհրդի կողմից առաջադրված Քրիստինե Սարոյանի լիազորությունները և նրա փոխարեն Խորհրդի կազմում երեք տարի ժամկետով հաստատել Թինա Հովհաննիսյանին:

2. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի մարտի 25-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 47-Ա որոշման հավելվածում «Սարոյան Քրիստինե» բառերը փոխարինել «Հովհաննիսյան Թինա» բառերով:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է